

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ



* Ուղղ.	երեխա(ն)	երագ(ը)	ես	սա
* Սեռ.	երեխայի	երագի	իմ	սրա
* Տր.	երեխայի(ն)	երագի(ն)	ինձ	սրան
* Հայց.	երեխայի(ն)	երագ(ը)	ինձ	սա
* Բաց.	երեխայից	երագից	ինձնից	սրանից
* Գործ.	երեխայով	երագով	ինձնով	սրանով
* Ներգ.	-----	երագում	ինձնում	սրանում
*				

1. Ի՞նչ է դերանվանական հոլովումը:

2. Անձնական և ցուցական դերանունների հոլովման տարբերությունները:

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ (այո կամ ոչ)

- * 1. Փոխադարձ դերանուններն են՝ **իրար, միմյանց, մեկմեկու, մեկմեկի**:
- * 2. Ունեն եզակի և հոգնակի թիվ:
- * 3. Հոդ չեն ստանում:
- * 4. Նախադասության մեջ կարող են ենթակա դառնալ:
- * 5. Չունեն ուղղական հոլով:
- * 6. Սեռական և տրական հոլովները ձևով նման են:
- * 7. Հայցական հոլովը գործածական չէ:
- * 8. Ցույց է տալիս փոխադարձաբար իրար հետ կապված առարկաներ (անձ կամ իր):
- * 9. **Մեկմեկու** դերանվան գործիական հոլովի ձևն է **մեկմեկուվ**:
- * 10. **Միմյանց** դերանունն ունի գրության նաև **միմիանց** ձևը:


Բաց թողած տեղերում գրի՛ր համապատասխան դերանուններ:

- * (Որոշյալ) մարդ իր աստղն ունի:
- * Պանդուխտներին (ցուցական) ճանապարհ են ցույց տալիս:
- * Գիտե՞ս, թե (հարցական) է անապատը լավ. դրանում (անորոշ) տեղ աղբյուրներ են թաքնված:
- * Շատ տխուր բան է, (հարաբերական) բարեկամներին մոռանում են:
- * Նրանց պետք է ասել. «Ես տեսա (անորոշ) տուն, (հարաբերական) արժե հարյուր հազար ֆրանկ»: Եվ միայն այդ ժամանակ նրանք կբացականչեն. «Ինչպիսի գեղեցկություն»:
- * (Որոշյալ) պետք է խնդրել այն, ինչ նա կարող է տալ:
- * (Անձնական) դատելը (անորոշ) դատելուց դժվար է:
- * (Ժխտական) կատարյալ չէ, - ասաց աղվեսը:

* Փակագծերում տրված բառերը համապատասխանեցնել նախադասություններին:

* (Դու) վարդը (դու) համար այդքան թանկ է, որովհետև (դու) նրան տվել ես (դու) ամբողջ հոգին:

* Գործեր կան, (որ) կարող են սպասել: (Դա) վնաս չի լինի:
Բայց եթե բառբարներին ազատություն տաս, փորձանքից չես խուսափի:



* ես ինձ
դու քեզ
նա իրեն
նա նրան
ինքը իրեն

ինքնիրեն



ՀԱՅԿ

Մեր Հայրենիք, ազատ,

անկախ,

Որ ապրում է դարեդար,

Յուր որդիքը արդ կանչում է

Ազատ, անկախ Հայաստան:

իրար տալ

իրար կոկորդ կրծել

իրար անցնել

իրար ուտել

իրար խառնվել

իրար միս ուտել

Ուղղի՛ր սխալները:

- * Ինչո՞ւ համար գնեցիր այդ ամսագիրը:
- * Գնա՛ և անմիջապես արա՛ այն, ինչ-որ հանձնարարված է:
- * - Վերջին դասից հետո Դուք մնացե՛ք դասարանում, - ասաց ուսուցիչն աշակերտներին:
- * Նա հպարտանում էր իրեն նախնիների հերոսական գործերով:
- * Ինչո՞ւմն է բանը:
- * Ոչ մեկ չկարողացավ լուծել այդ խնդիրը:
- * Միևնույն է, մարդկանց մեջ նույնպես մարդ մենակ է զգում իրան, - նկատեց օձը:
- * Դու ոչ ոքու չես զարմացնի:
- * Ես քեզ ծուռ-ծուռ կնայեմ, բայց դու սո՛ւս մնա: Խոսքերը միայն խանգարում են իրար լավ հասկանալուն:

- * Բանը նրանում է, որ դու իմ համար առայժմ միայն մի փոքրիկ տղա ես, էնպիսին, ինչպիսին մյուս հազարավոր տղաները:
- * Ես էլ քո պետքը չեմ: Ես քո համար ընդամենը մի սովորական աղվես եմ: Բայց եթե դու ինձ ընտելացնես, մենք անհրաժեշտ կդառնանք մեկ մեկու համար:
- * Մարդկանց ոտնաձայներից ես միշտ փախչում եմ և թաքնվում գետնի տակ: Բայց քո քայլվածքը երգի պես ինձ կկանչի, և ես դուրս կգամ իմ թաքստոցից:
- * «Իմ ուրախությունն ու գեղեցկությունը հավիտենական չեն», - ինքնիրեն ասաց Փոքրիկ իշխանը:
- * Իմ ընկերը հիմա ապրում է Ֆրանսիայում, ուր հիմա սով է և սառնամանիք:
- * Քո վարդը քո համար էդքան թանկ է, որովհետև դու նրան տվել ես քո բոլոր հոգին:
- * Երբ թողնում ես, որ քեզի ընտելացնեն, հետո դրա համար կարող է և լաց լինես:

- * Անտուան դը սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» հեքիաթի հերոսներն են թագավորը, փառամուլը, լապտերավառը և այլոք:
- * Ես քո մոտ եկա:
- * Մայրը խնդրեց, որ տղան իրան ցույց տա տետրը:
- * – Երևի դուք սխալվել եք, - ասաց Արամն անձանոթին:
- * Անունդ ինչպե՞ս է:
- * Դու միշտ իմ բարեկամը կլինես: Դու կուզենաս իմ հետ ծիծաղել:
- * Իմ մոտով են անցել բոլոր ճեպընթաց գնացքները:

Կետադրի՝ ը տրված նախադասությունները:

1. Բայց չէ՞ որ չկան այնպիսի խանութներ որտեղ հնարավոր լինի բարեկամներ վաճառել:
2. Նույնիսկ երբ պետք է մեռնել լավ է երբ բարեկամ կա:
3. - Իսկ ինչի համար ես տիրում աստղերին:
 - Որ հարուստ լինեմ:
 - Իսկ ինչու ես ուզում հարուստ լինել:
 - Որ էլի նոր աստղեր առնեմ:
4. Միևնույնն է պետք է մի երկու թրթուր հանդուրժեմ եթե ուզում եմ թիթեռների հետ ծանոթանալ:
5. Ես վախենում եմ դառնալ մեծերի նման որոնց ոչինչ հետաքրքիր չէ՝ բացի թվերից:

Կետադրի՝ ը տրված նախադասությունները:

1. Բայց չէ՞ որ չկան այնպիսի խանութներ, որտեղ հնարավոր լինի բարեկամներ վաճառել:
2. Նույնիսկ երբ պետք է մեռնել, լավ է, երբ բարեկամ կա:
3. - Իսկ ինչի՞ համար ես տիրում աստղերին:
 - Որ հարուստ լինեմ:
 - Իսկ ինչո՞ւ ես ուզում հարուստ լինել:
 - Որ էլի նոր աստղեր առնեմ:
4. Միևնույնն է, պետք է մի երկու թրթուր հանդուրժեմ, եթե ուզում եմ թիթեռների հետ ծանոթանալ:
5. Ես վախենում եմ դառնալ մեծերի նման, որոնց ոչինչ հետաքրքիր չէ՝ բացի թվերից:

Որոշի՛ր հողի տեսակը:

1. Գաղտնիքս շատ պարզ է: Միայն սիրտն է սրատես: Ամենագիսավորը աչքով չես տեսնի:
2. Երեխաներս մեծահասակների նկատմամբ պետք է ներողամիտ լինենք: Չարժե նրանցից նեղանալ:
3. Շատ խորհրդավոր ու առեղծվածային է արցունքների աշխարհը...
4. Եթե դու կարողանաս ինքդ քեզ դատել, նշանակում է հիրավի իմաստուն ես...
5. -Իշխանությունը նախ և առաջ պետք է խելացի լինի: Եթե դու ժողովրդին հրամայես ծովը նետվել, նա հեղափոխություն կանի: Ես իրավունք ունեմ հնազանդություն պահանջելու, որովհետև իմ հրամանները խելացի են...
6. Առավոտյան հենց որ արթնանաս, լվացվես ու քեզ կարգի բերես, պետք է տեղնուտեղը կարգի բերես նաև մոլորակդ...

Գտի՛ր հողի գործածության սխալները:

- * Եթե ուղիղ գնալու լինես, հեռու չես գնա...
- * Ես հասարակի մեջ էլ եմ սխալվում...
- * Սրտին էլ է ջուր պետք...
- * Ամեն մեկից պետք է խնդրել այն, ինչ նա կարող է տալ...
- * Միայն երեխաներն գիտեն, թե ինչ են փնտրում:
- * Չէ՞ որ երբ կարմրում ես, դա նշանակում է «այո»...
- * - Կուզեի իմանալ, թե աստղերը ինչու են փայլում, - մտածկոտ ասաց նա: - Դա երևի նրա համար է, որ վաղ թե ուշ ամեն մարդ իր աստղն գտնի....
 - Գնա՛, մի անգա՛մ էլ նայիր մյուս վարդերին: Դու կհասկանաս, որ ՔՈ վարդը աշխարհում միակն է:

Փոքրիկ իշխանը

- * -Եթե ուղիղ գնալու լինես, հեռու չես գնա...
- * Ես հասարակի մեջ էլ եմ սխալվում...
- * Սրտին էլ է ջուր պետք...
- * Ամեն մեկից պետք է խնդրել այն ,ինչ նա կարող է տալ...
- * **Միայն երեխաներն գիտեն, թե ինչ են փնտրում:**
- * Չէ՞ որ երբ կարմրում ես, դա նշանակում է «այո»...
- * **- Կուզեի իմանալ, թե աստղերը ինչու են փայլում, - մտածկոտ ասաց նա: - Դա երևի նրա համար է, որ վաղ թե ուշ ամեն մարդ իր աստղն գտնի....**
- Գնա՛, մի անգա՛մ էլ նայիր մյուս վարդերին: Դու կհասկանաս, որ ՔՈ վարդը աշխարհում միակն է:

Գտի՛ր հողի գործածության սխալները:

- * -Եթե ես մի որևէ գեներալի հրամայեմ, որ թիթեռի նման ծաղկից ծաղիկ թռչի կամ ողբերգություն գրի կամ էլ ճայ դառնա, իսկ գեներալը հրամանը չկատարի, ո՞վ կլինի մեղավոր՝ նա, թե՞ ես:
- Դուք, Ձերդ մեծություն, -առանց տատանվելու պատասխանեց Փոքրիկ իշխանն:
- * Բայց ես շատ ջահել էի այն ժամանակ և դեռ սիրել չգիտեի:
- * Կանթեղը պետք է պահպանել. քամու պոռթկումից այն կարող է հանգչել:
- * Եթե ինչ-որ հարցը հետաքրքրել է, մի՛ նահանջիր, քանի դեռ պատասխանը չես ստացել:
- * Մարդիկը մոռացել են այս ճշմարտությունը: Բայց դու մի՛ մոռացիր, որ հավիտյան պատասխանատու ես նրա համար, ում ընտելացրել ես:

Փոքրիկ իշխանը

* -Եթե ես մի որևէ գեներալի հրամայեմ, որ թիթեռի նման ծաղկից ծաղիկ թռչի կամ ողբերգություն գրի կամ էլ ճայ դառնա, իսկ գեներալը հրամանը չկատարի, ո՞վ կլինի մեղավոր՝ նա, թե ես:

-Դուք, Ձերդ մեծություն, -առանց տատանվելու պատասխանեց Փոքրիկ իշխանն:

* Բայց ես շատ ջահել էի այն ժամանակ և դեռ սիրել չգիտեի:

* Կանթեղը պետք է պահպանել. քամու պոռթկումից այն կարող է հանգչել:

* Եթե ինչ-որ հարց հետաքրքրել է, մի՛ նահանջիր, քանի դեռ պատասխանը չես ստացել:

* Մարդիկ մոռացել են այս ճշմարտությունը: Բայց դու մի՛ մոռացիր, որ հավիտյան պատասխանատու ես նրա համար, ում ընտելացրել ես:

Օգտագործելով դերանուններ՝ գույգերով գրել փոքրիկ երկխոսություն:

* Թեմաներ՝ «Կինոդիտումից հետո»

* «Գրադարանում»

* «Վերելակում»

* Գրականության դասից հետո»